

# **ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

## **ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԺՈՒՆԱԼԻՍԻԿԱՆ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ**

### **ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Արդի քաղաքացիավարական համակարգերում տեղի ունեցող հաղորդակցածին (կոմունիկոգեն) գործընթացները գլոբալ, տարածաշրջանային և ազգային մակարդակմերում նպաստում են գիտելիքի հասարակության կյայացմանը: Քաղաքացիական ժուռնալիստիկան քաղաքացիավարական մասնակցություն է, որը նախաձեռնվում և իրականացվում է անհատների, խմբերի ու հասարակական միավորումների կողմից՝ հանրային քաղաքականության ոլորտներում ապահովելով քաղաքացիների ժողովրդավարական ազդեցությունը որոշումների նախապատրաստման, ընդունման, իրականացման ու վերահսկման գործընթացներին: Տեղեկատվական-հաղորդակցական տարածության մեջ բլոգներից ու սոցիալական ցանցերից օգտվողների համարժեք ներգրավվածությունը նոր հնարավորություններ է ստեղծում բազմակողմ սոցիալական կապերի և փոխներգրծության համար: Սոցիալական մեդիան անսահմանափակ ներգրավվածություն ունի իր առցանց և ցանցային միջնորդավորվածության շնորհիվ, որի արդյունավետությունը կախված չէ քաղաքական վարչաձևից: Ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական երկրներում պարբերաբար ավելանում է Facebook, Twitter, YouTube, Google+, LinkedIn, Odnoklassniki, Mail.RuGroup ու սոցիալական մյուս մեդիաների օգտատերերի քանակը<sup>1</sup>, որոնք դառնում են ակտիվ քաղաքացիական գործունեության շարժունակ առանցքը:

Քաղաքացիական ժուռնալիստիկան ոչ միայն ժուռնալիստիկայի տեսակ է, այլև ակտիվ քաղաքացիների, հասարակական խմբերի, միավորումների, շարժուների, քաղաքացիական հասարակության ինստիտուտների և քաղաքականության սուբյեկտների տեղեկատվական-հաղորդակցական հանրային գործունեության և քաղաքացիավարական ներկայացուցության առանձնահատուկ եղանակ, որի միջոցով ապահովվում են հաշվետվողականությունը, հետադարձ կապը, ինքնակառավարումը, հանդուրժողականությունը, մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը:

Քաղաքացիական ժուռնալիստիկան ակտիվ քաղաքացիների առանձնահատուկ գործելառն է, որը ենթադրում է փոխել և զարգացնել սո-

<sup>1</sup> Տես <http://www.socialbakers.com>, *Macarthy A.*, 500 Social Media Marketing Tips: Essential Advice, Hints and Strategy for Business: Facebook, Twitter, Pinterest, Google+, YouTube, Instagram, LinkedIn, and More! CreateSpace Independent Publishing Platform, 2013, *Scott D. M.*, The New Rules of Marketing & PR: How to Use Social Media, Online Video, Mobile Applications, Blogs, News Releases, and Viral Marketing to Reach Buyers Directly. Wiley, 2013, *Safko L.*, The Social Media Bible: Tactics, Tools, and Strategies for Business Success. Wiley, 2012:

ցիալ-քաղաքական միջավայրը: Այն իր հետևողականության շնորհիվ հասարակությանը պարբերաբար տեղեկացնում է համայնքի հիմնախնդիրների մասին, որպեսզի մարդիկ համարժեք պատկերացում ունենան առկա իրավիճակի և հետագա զարգացումների մասին: Լինելով առաջադիմական՝ քաղաքացիական ժուռնալիստիկան իր որակական հատկանիշներով միտված է ակտիվ սոցիալականացման, վերասոցիալականացման, քաղաքացիական նշակույթի և սոցիալապես նշանակալի նորմերի ձևավորման: Սոցիալապես նշանակալի դարձնելով քաղաքացիավարական փոփոխությունները՝ այն միաժամանակ նպատակ ունի անդապնդելու հասարակական համակարգի կայունությունն ու կյանքի որակը: Դրանով իսկ սոցիումի և հասարակական հարաբերությունների արմատական փոփոխությունները ստանում են ինստիտուցիոնալ նշանակություն՝ պահպանելով «ընթացակարգային ժողովրդավարությունը» (Liquid democracy):

Քննարկելով քաղաքացիական ժուռնալիստիկային (citizen journalism) և քաղաքացի ժուռնալիստներին (citizen journalist) վերաբերող հարցերը՝ մի շարք վերլուծաբաններ կարևորում են հատկապես ակտիվ քաղաքացիության չափումը<sup>2</sup> և սոցիալական կապիտալի կայացման նախադրյալները (քաղաքական լրագրություն, ժողովրդական լրագրություն, ցանցային լրագրություն, ազատ լրագրություն, քաղաքացիական մեղիա, նաև նակացային լրագրություն, ինքնուրույն լրագրություն, մեղիաբիզնեսի լրագրություն, նորարական լրագրություն, սոցիալական լրագրություն, համայնքային լրագրություն)<sup>3</sup>: Քաղաքացիական ժուռնալիստիկան ձգտում է խթանելու քաղաքացիական դիսկուրսը, որի ռազմավարությունը նպատակաւորված է բարելավելու քաղաքացիների ուղղակի մասնակցությունը հասարակական կյանքին՝ նպաստելով քաղաքացիավարական լեզիտմությանը, հաղթահարելով հասարակական անջրպետն ու հաղորդակցման պակասը<sup>4</sup>:

Քաղաքացիական և քաղաքացիների ժուռնալիստիկան սոցիալական շարժումակության, ցանցում տեղեկատվության համաշափ տարածման ու հանակողմանիորեն օգտագործման գրավականներից է, որն «առաքող-ընդունող-փոխանցող» ձևաչափով ընդլայնում է տեղեկատվության ներքափական շրջանակներն ու մակարդակները: Ցանցային սոցիալական կապերն ակտիվորեն զարգացնում են «մուտքի-ելքի» տեղեկատվական հոսքերը, համագործակցային ընթացակարգերն ու ռեսուրսները՝ քաղա-

<sup>2</sup> Տե՛ս *Glaser M.*, Your Guide to Citizen Journalism. Public Broadcasting Service. Retrieved March 22, 2009 (September 27, 2006), // <http://www.pbs.org/mediashift/2006/09/your-guide-to-citizen-journalism270.html>

<sup>3</sup> Տե՛ս *Rogers T.*, What is Hyperlocal Journalism? // <http://journalism.about.com/od/citizenjournalism/a/hyperlocal.htm>. A Model for the 21st century newsroom (pt.2): distributed journalism, October 2, 2007, // <http://onlinejournalismblog.com/2007/10/02/a-model-for-the-21st-century-newsroom-pt2-distributed-journalism/>, A model for the 21st century newsroom: (pt.1) the news diamond, // <http://onlinejournalismblog.wordpress.com/2007/09/17/a-model-for-the-21st-century-newsroom-pt1-the-news-diamond/>, *И. М. Дзялошинский*. Российские СМИ: перспективы трансформации, // Журналист. Социальные коммуникации, 2011, № 1, էջ 17-35:

<sup>4</sup> Տե՛ս «Civic Journalism: Six Case Studies», // A Joint Report by the Pew Center for Civic Journalism and the Poynter Institute for Media Studies (Ed. by Jan Schaffer and Edward D. Miller, Reported by Staci D. Kramer). Tides Foundation, 1995 ([http://www.cpn.org/topics/communication/civiccases\\_a.html](http://www.cpn.org/topics/communication/civiccases_a.html)):

քացիական ժուռնալիստիկան դարձնելով հասարակական ներուժի և սոցիալական կապիտալի գործոն:

Ժողովրդավարական մեդիազարգացումները փոխակերպեցին ավանդական ԶԼՄ-ն և զանգվածային հաղորդակցման բոլոր միջոցները, որոնք նոր սոցիալականացման հետևանքով ստեղծեցին իրենց կայքերը, բլոգները և սոցիալական ցանցերը: Քաղաքացիավարական ինտեգրումը դարձավ տեղեկատվական-հաղորդակցական միջավայրի բազմակարծության երաշխիքը՝ տեղեկատվական-հաղորդակցական սուբյեկտներից պահանջելով քաղաքացիանետ գործունեություն ու լրատվական ռեսուրսների համաչափ հասանելիություն: Դրա շնորհիվ քաղաքականության հիմնական սուբյեկտների հիմնախնդիրը դարձավ քաղաքացիավարական արժեքների գերակայությունը՝ ընդլայնելով ժողովրդավարական մասնակցության ընթացակարգային շրջանակներն ու ինստիտուցիոնալ հիմքերը: Այդ սոցիալական ներուժի միջոցով էլ քաղաքացիական մեդիան և քաղաքացիավարական համախմբման սոցիալական ինստիտուտը կայանում են նույնիսկ ոչ ժողովրդավարական վարչաձևերում՝ քաղաքացիական հասարակությանն աստիճանաբար ներգրավելով հանրային դիսկուրսի մեջ: Այս առումով՝ **քաղաքացիական ժուռնալիստիկան մետաժուռնալիստիկա է և ժուռնալիստիկայի փիլիսոփայություն**, որը, ի տարբերություն ավանդական ժուռնալիստիկայի, փորձում է համարժեքորեն ազդել հանրային կյանքի փոփոխությունների վրա՝ ներառելով քաղաքացիական տրամադրությունները, քաղաքացիական անհնագանդությունների մոտիվացված վարքագիծը, մասնակցային պատասխանատվությունը և սոցիալական արդարությունը:

Քաղաքացիական ժուռնալիստները գործում են ինքնուրույն և ազատ են արտահայտելու տարրեր տեսակետներ, որտեղ կարևոր են ինքնակազմակերպվածությունը, օբյեկտիվությունն ու լրագրողական էթիկայի պահպանումը: Իսկ քաղաքացիավարական չափման համատեքստում մեդիայի համար վճռորոշ նշանակություն ունեն հանրային պատասխանատվությունը, նախաձեռնողականությունը, ներգրավվածությունը, հրատապությունը, սոցիալական արդարությունը, ճշմարտությունը, հանդուրժողականությունը և հաշվետվողականությունը: Դրանք էլ հնարավորություն են տալիս ոչ միայն ձևավորելու համարժեք հասարակական կարծիք, այլև առաջարկելու լուծումներ և հրապարակային (բաց, թափանցիկ) դարձնելու քաղաքացիական մասնակցությունը հանրային որոշումների ընդունման գործընթացին: Քաղաքացիական ժուռնալիստիկայի արդյունավետ ազդեցությունը զանգվածային հաղորդակցման տեխնոլոգիաների առաջընթա-

<sup>5</sup> Տե՛ս Jarvis E., Civic Journalism Vs. Traditional Journalism, //[http://www.ehow.com/info\\_8739518\\_civic-journalism-vs-traditional-journalism.html](http://www.ehow.com/info_8739518_civic-journalism-vs-traditional-journalism.html); «Civic Journalism: Six Case Studies. A Joint Report by the Pew Center for Civic Journalism and The Poynter Institute for Media Studies» (Ed. by J. Schaffer and Ed. D. Miller, Reported by S. D. Kramer), // <http://www.pewcenter.org/doingcj/pubs/cases/intro.html>; Civic Journalism Is... True Stories from America's Newsrooms, // <http://www.pewcenter.org/doingcj/pubs/cjis/intro.html>; «Measuring Civic Journalism's Progress: A Report Across a Decade of Activity» (Conducted by: L. A. Friedland). University of Wisconsin-Madison Sandy Nichols, // <http://www.slideshare.net/jorcoms21/measuring-civic-journalisms-progress>

ցի վրա<sup>6</sup> հիմնականում պայմանավորված է սոցիալական կապերով ու վստահությամբ, քաղաքացիավարական մասնակցության և որոշումների ընդունման սոցիալական ներուժով ու ռեսուրսներով: Ակտիվ քաղաքացիներն ու քաղաքացիական շարժումները դարձել են այն **հաղորդակցական առանցքը**, որի շուրջ կառուցակցվում ու զարգանում են արդիական տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները:

Յետխորհրդային հասարակությունների քաղաքական կյանքում քաղաքացիական մեղիայի զարգացումը քաղաքական համակարգի և վարչական ժողովրդավարական փոխակերպման ու սոցիալ-քաղաքական էվոլյուցիայի արդյունք է: Այն աշխարհաքաղաքացիական մշակույթի իրականացման եղանակ է, պայմանավորված է ոչ միայն աշխարհաքաղաքական ժողովրդավարական ինստիտուտների և մարդասիրական նորմերի գերակայությամբ<sup>7</sup>, այլև տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների առաջընթացով: Միաժամանակ, քաղաքացիական մեղիայում հետևողականորեն ու պարբերաբար դրսերվում են նաև քաղաքականության սուբյեկտների և քաղաքացիական ժուռալիստների՝ սոցիալական վերահսկողության քաղաքացիավարական ընթացակարգերը կառուցակցելու ձգությունները: Այն ոչ թե դառնում է այլընտրանքային մեղիա՝ մարտահրավեր «նետելով» ավանդական մեղիային, այլ փոխակերպում է մեղիաուղղութը՝ այն դարձնելով սոցիալապես առավել պատասխանատու, քաղաքացիակենտրոն և քաղաքացիամետ:

Ցանցի ազատության (Freedom of the Net) մասին համեմատական հետազոտությունները իրականացվում են «Ազատության տաճ» կողմից, որը հնարավորություն է տալիս համաշխարհային սոցիալ-քաղաքական գործընթացներում գնահատելու համացանցի և թվային լրատվամիջոցների ազատության մակարդակը: Ցանցի ազատության ռեյթինգները սահմանվում են երեք չափումով: Դրանք են՝ հասանելիության խոչընդոտները (Obstacles to Access), բովանդակային սահմանափակումները (Limit on Content) և օգտվողի իրավունքների խախտումները (Violations of User Rights):

Յետխորհրդային երկրներում ցանցի ազատության ռեյթինգի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների առկա հնարավորություններին, այ-

<sup>6</sup> Ավելի մարզամասն տես **Johnson K. A.**, Citizen Journalism in the Community and the Classroom, in: Rosenberry J. and St. John III B. (eds.): Public Journalism 2.0: The Promise and Reality of a Citizen Engaged Press. Routledge, 2009, էջ 99-112, **Davis R.**, Interplay: Political Blogging and Journalism, in: Fox R. L. and Ramos J. M. (eds.): iPolitics: Citizens, Elections, and Governing in the New Media Era. Cambridge University Press, 2011, էջ 76-102, **Brants K.**, Trust, cynicism, and responsiveness: the uneasy situation of journalism in democracy, in: Peters C. and Broersma M. (eds.): Rethinking Journalism: Trust and Participation in a Transformed News Landscape. Routledge, 2012, էջ 15-27:

<sup>7</sup> Այդ մասին տես **Archibugi D.**, Cosmopolitan Democracy and its Critics: A Review, // European Journal of International Relations, 2004, 10(3), էջ 445-464, **Weiss T. G.**, Humanitarian Intervention: Ideas in Action. Cambridge, Polity, 2007:

\* Յուրաքանչյուր երկիր գնահատվում է 0 (առավել ազատ) և 100 (նվազագույն ազատ) միավորների միջակայրում, որն էլ հիմք է ծառայում որոշելու համացանցի ազատության կարգավիճակը՝ ազատ (0-30 միավոր), մասամբ ազատ (31-60 միավոր) կամ անազատ (61-100 միավոր) (տես <http://freedomhouse.org/report/freedom-net-2013-global-scores>):

նուամենայնիվ հետխորհրդային երկրները զգալի անելիքներ ունեն ցանցի ազատության պաշտպանության գործընթացում: 2013 թ. տվյալներով, հետխորհրդային 10 երկրներից միայն չորսն ունեն «ազատ» կարգավիճակ: Հարավային Կովկասի երկրներում ցանցի ազատության (տես այսուսակ 1) և մամուլի ազատության ռեյթինգների (տես այսուսակ 2) միջև դեռևս առկա են անհամապատասխանություններ: Հայաստանը և Վրաստանը, ի տարբերություն Աղրբեջանի, սոցիալական մեղիայի և քաղաքացիական ժուռնալիստիկայի կայացման ոլորտներում արձանագրում են դրական տեղաշաղթեր: Այս հանգամանքը պայմանավորված է նաև Հայաստանում և Վրաստանում քաղաքական համակարգի և քաղաքական վարչակարգի ժողովրդավարացման գործընթացներով:

### **Աղյուսակ 1 Հետխորհրդային տարածաշրջանում ցանցի ազատության ռեյթինգը (2013 թ.)<sup>\*</sup>**

Տես	Երկիր	Կարգավիճակ	Ընդամենը (0-100) միավորներ	Հսանելիության խրանությունը (Obstacles to Access)	Բովանդակային սահմանափակմանը (Limit on Content)	Օգովողի հրավարանի խախումներ (Violations of User Rights)
2.	Էստոնիա	ազատ	9	1	3	5
12.	Վրաստան	ազատ	26	8	7	11
16.	Ուկրաինա	ազատ	28	7	7	14
17.	Հայաստան	ազատ	29	8	9	12
23.	Ղրղզստան	մասամբ ազատ	35	12	10	13
39.	Աղրբեջան	մասամբ ազատ	52	13	17	22
41.	Ռուսաստան	մասամբ ազատ	54	10	19	25
44.	Ղազախստան	մասամբ ազատ	59	15	23	21
50.	Բելառուս	անազատ	67	16	22	29
55.	Ուգարկաստան	անազատ	78	20	28	30

Հետխորհրդային երկրների ժողովրդավարական առաջնահերթությունների կառուցակցման առումով առանցքային նշանակություն ունեն մամուլի և խոսրի ազատության պաշտպանության ներպետական ընթացակարգերը: 2013 թ. տվյալներով, հետխորհրդային երկրների անկախության ժամանակահատվածում ևս խոսրի ազատության պաշտպանության իրավիճակը շարունակում է մնալ խնդրահարույց (տես այսուսակ 2): Այն պարունակում է նոր մարտահրավերներ, որոնց հաղթահարման միտուները դրսևորվում են քաղաքացիական ժուռնալիստների գործունեության տեղեկատվական-հաղորդակցական տարածության մեջ: Ժողովրդավարական արժեքային կողմնորոշիչների անորոշությունների պայմաններում քաղաքացիական ժուռնալիստիկան կարող է կառուցակցել հետխորհրդային հասարակությունների սոցիալական համերաշխության և վստահության համընդհանուր կանոնները:

\* 2013 թ. ցանցի ազատության ռեյթինգը կատարված է 60 երկրների համար, որոնցից 10-ը հետխորհրդային երկրներ են (տես <http://freedomhouse.org/report/freedom-net-2013-global-scores>):

## Աղյուսակ 2

**Հետխորհրդային երկրների մամուլի ազատության ռեյթինգը (2013 թ.)<sup>8</sup>**

Երկիր	Կարգավիճակ	Սամովի ազատության միավոր	Իրավական միջավայր	Բաղաքական միջավայր	Տնտեսական միջավայր
Էստոնիա	ազատ	16	5	4	7
Լիտվա	ազատ	24	6	8	10
Լատվիա	ազատ	28	6	12	10
Վրաստան	մասամբ ազատ	49	12	20	17
Մոլդովա	մասամբ ազատ	53	16	18	19
Ռուսաստան	մասամբ ազատ	60	19	21	20
Հայաստան	անազատ	61	19	22	20
Ղողցստան	անազատ	69	20	29	20
Տաջիկստան	անազատ	79	25	29	25
Ուստաստան	անազատ	81	25	32	24
Ադրբեյչան	անազատ	82	27	33	22
Ղազախստան	անազատ	84	29	32	23
Շեքսուս	անազատ	93	29	36	28
Ուզբեկստան	անազատ	95	30	37	28
Թուրքմենիա	անազատ	96	30	37	29

Զարգացող մեդիակրատական և ինֆոկրատական ենթակառուցվածքներին լրացնում է սոցիալական ցանցերի **մարդակենարուն հաղորդակցահշխանությունը**: Քաղաքական ինստիտուտների կայացումը, էլեկտրոնային մասնակցության ընթացակարգերի ու նոր տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների ամնախաղեա առաջընթացը<sup>\*</sup>, սոցիալական մեդիայի և քաղաքացիավարական հաղորդակցման միջավայրը փոխակերպում են հանրային որոշումների ընդունման գործընթացը:

Թվայնացված տեղեկատվությունը, էլեկտրոնային փաստերը, ինտերնետային ծառայություններն ու կայքերը, ինտերնետային որոնողական համակարգերն ու բլոգային հարթակները քաղաքացիական ժուռնալիստիկայի ու ակտիվ քաղաքացիական մասնակցության զարգացման նոր հնարավորություններ են ընձեռում:

Մարդկային կայուն զարգացումը ենթադրում է հասարակական հարաբերությունների քաղաքակրթում, սոցիալական և քաղաքացիական երկխոսության ապահովում, քաղաքական միջավայրի սոցիալականացում, քաղաքացիավարական վերահսկողություն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի, ինչպես նաև հանրա-

<sup>8</sup> Տե՛ս <http://www.freedomhouse.org/report/freedom-press/freedom-press-2013>

\* Խոսքը մասնավորապես նաև Web 2.0 գործիքակազմի մասին է, որը տեղեկատվական-հաղորդակցական համակարգի նախագծման այնպիսի մեթոդիկա է, գործիքակազմ և Web-ռեսուրսների կազմակերպման, իրականացան և աջակցման համալիր նույնություն, ինչը հնարավորություն է տալիս յուրաքանչյուրին դառնալու համացանցային տարածության ինտերակտիվ մասնակիցը (մանրամասն տե՛ս *O'Reilly T.*, What Is Web 2.0: Design Patterns and Business Models for the Next Generation of Software (09/30/2005) // <http://oreilly.com/web2/archive/what-is-web-20.html>):

յին ռեսուլտատների արդյունավետ օգտագործման նկատմամբ: Դետևաբար, քաղաքացիավարական շահերի գերակայության և բազմաբնույթ սոցիալական խմբերի դիրքորոշումների ապահովումը քաղաքականության սուբյեկտների սոցիալական պատասխանատվության գրավականներից մեկն է: Քաղաքացիական ժուռնալիստիկան՝ որպես քաղաքացիավարության ինստիտուտ, սոցիալական կապիտալի, տեղեկատվական-հաղորդակցական սուբյեկտների մտավոր ներուժի ու կարողությունների հանախնճման եղանակներից է:

Քաղաքացիական ժուռնալիստիկան կարող է իրականացվել ինչպես սոցիալական մեդիայի, այնպես էլ տարաբնույթ տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով<sup>9</sup>: Ի. Չյալոշինսկին, դիտարկելով ԶԼՄ-ի, ժուռնալիստիկայի և հասարակական ինստիտուտների փոխհարաբերությունները, նշում է, որ մեդիագործընթացների օրինաչափությունների և միտումների համեմատական հետազոտություններում պատշաճորեն ներառված են երեք հիմնական համալիրներ՝ սոցիոկենտրոնացված հետազոտություններ (социоцентрированные исследования), մեդիակենտրոնացված աշխատանքներ (медиацентрированные работы) և մարդակենտրոնացված հրապարակումներ (антропоцентрированные публикации)<sup>10</sup>:

Դետխորիդային հասարակությունների համար քաղաքացիական լրագրությունն առանցքային նշանակություն ունի խոսքի և տեղեկատվական ազատության, մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության ընթացակարգերի, քաղաքացիավարական նշակույթի կայացման համար: Դասարակական հարաբերությունների փոխակերպումները հանգեցնում են քաղաքացիավարական ընթացակարգերի զարգացմանը, որոնք ել վերահնաստավորում ու վերաձևավորում են լրագրողական գործունեության սոցիալական չափանիշները: Այս համատեքստում հատկապես կարևորվում են լրագրողական եթիկայի, քաղաքացիական պատասխանատվության, քաղաքացիակենտրոն լրատվական կայքերի, տեղեկատվության ու հանացանցային գրառումների հավաստիության, մանուկի ինքնակառավարման և խոսքի ազատության հիմնախնդիրները<sup>11</sup>:

Գիտելիքի հասարակության տեղեկատվական-հաղորդակցական փոխակերպումները նոր մարտահրավերներ են առաջացնում քաղաքացիա-

<sup>9</sup> Սանրամասն տես **В. Д. Попов**. Журналистика как политическая наука // "Социология власти", 2003, № 6, էջ 5-23, **Е. А. Зверева**. Журналистика эпохи постмодерна: векторы исследований // "Социально-экономические явления и процессы", 2011, № 10 (032), էջ 265-272, **Л. С. Яковлев**. Логики интеграции сетевых идеологий в политическое пространство России // "Вестник Поволжской академии государственной службы", 2012, № 1, էջ 59-65, **К. А. Карякина**. Актуальные формы и модели новых медиа: от понимания аудитории к созданию контента // "Медиаскоп" [электрон. науч. журн.], 2010, вып. 1 // <http://mediascopе. ru/node/524> (16.03.2012), **И. М. Дзялошинский, М. И. Дзялошинская**. Десять «смертных грехов» журналистики глазами будущих журналистов // "Медиаскоп", 2011, вып. 4 // <http://mediascopе. ru/node/952> (14.12.2011):

<sup>10</sup> Տես **И. М. Дзялошинский**. Российские СМИ: перспективы трансформации // "Журналист. Социальные коммуникации", 2011, № 1, էջ 17:

<sup>11</sup> Տես «Traditional media divided on how to promote citizen journalism ethics [World Press Freedom Day]», // <http://ijnet.org/stories/traditional-media-divided-how-promote-citizen-journalism-ethics-world-press-freedom-day>

վարական մասնակցության, հանրային ներգրավվածության և հրատապ նշանակություն ունեցող հիմնահարցերի քաղաքացիամետ օրակարգի ձևակերպման գործընթացում: Քաղաքացի լրագրողները, քաղաքացի թղթակիցները, քաղաքացի օգտվողները, քաղաքացի կայքերն ու բլոգներն իրենց ակտիվ գործունեության շնորհիվ փոխում են սոցիալական տարածաժամանակային միջակայքը: Առանց տարածաժամանակային սահմանների հաղորդակցումը փոխակերպում է ոչ միայն քաղաքացիավարական մասնակցության եղանակները, այլև սոցիալական ռիսկերն ու սպառնալիքները:

Քաղաքացիական ժուռնալիստիկայի և տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումը հրատապ է դարձնում սոցիալական պատասխանատվության և հաշվետվողականության սկզբունքները: Նմանատիպ հիմնախնդիրների կարգավորման նպատակով հրատապ են դառնում նաև *առցանց սոցիալական ցանցերի մշակույթի* կայացումն ու *կիբեռօմրուդմենի*<sup>12</sup> գործունեությունը:

Լրագրության իրավունքը, տեղեկատվության իրավունքն ու ազատությունը, մանուլի ազատությունը սոցիալական մեդիայի ակտիվ ազդեցության շնորհիվ արմատապես վերափոխում ու զարգացնում են մեդիահամակարգը: Լրագրողական գործունեությունը դառնում է քաղաքականության սուբյեկտների հանրային հաղորդակցման առանցքային գործոն:

Հարավային Կովկասի երկրներում 1998-2013 թթ. քաղաքացիական ազատությունների և քաղաքական իրավունքների համեմատական վերլուծության տվյալները ցույց են տալիս (տես՝ աղյուսակ 3), որ չնայած ժողովրդավարական բարեփոխումներին, այնուամենայնիվ ճարդու իրավունքների պաշտպանության ներպետական ընթացակարգերը դեռևս կայացման գործընթացում են: 2013 թ. տվյալներով, Հայաստանում և Վրաստանում ցանցի և մամուլի ազատության ռեյթինգների, ինչպես նաև 1998-2013 թթ. ազատության ռեյթինգի համեմատությունը ցույց է տալիս, որ այդ երկրներում առկա է ժողովրդավարական ինստիտուտների առաջընթաց, իսկ Աղրբեջանի դեպքում նահանջ, որովհետև 1998 թ. մինչև 2013 թ. լինելով «անազատ» պետություն՝ Աղրբեջանի քաղաքական համակարգում շարունակում են գերակայող մնալ հակաքաղաքացիավարական և հակաժողովրդավարական միտումները, որոնք ուղեկցվում են ժամանակակից ներտոտալիտարիզմին բնորոշ տարրերով: Աղրբեջանական ամբողջատիրության պայմաններում տեղեկատվական քաղաքականությունը նպատակառուղված է քաղաքացիական ժուռնալիստիկայի մշակույթի, լրագրողական արհեստավարժության և հաղորդակցման ազատությունների սահմանափակմանը, ինչն էլ ուղղակի միջամտություն է զանգվածային հաղորդակցման միջոցների, շարժունակ և պարբերաբար վերափոխվող քաղաքացիական հասարակության գործունեությանը՝ դրանց ենթարկեցնելով գերիշխող քաղաքական վարչակարգի շահերին:

<sup>12</sup> Այդ մասին տես՝ «Professional Journalism: Self-Regulation and New Media, Old Dilemmas in South East Europe and Turkey». UNESCO, 2011, էջ 86-88:

### Աղյուսակ 3

#### Հարավային Կովկասի երկրների ազատության ռեյթինգը (1998-2013 թթ.)<sup>13</sup>

Երկր	Տարի	Կարգավիճակ	Ազատության ռեյթինգ	Բարեխցիկան ազատություններ	Բարեխցիկան իրավունքներ
Հայաստան	2013	մասամբ ազատ	4.5	4	5
Ադրբեյչան		անազատ	5.5	5	6
Վրաստան		մասամբ ազատ	3.0	3	3
Հայաստան	2012	մասամբ ազատ	5.0	4	6
Ադրբեյչան		անազատ	5.5	5	6
Վրաստան		մասամբ ազատ	3.5	3	4
Հայաստան	2011	մասամբ ազատ	5.0	4	6
Ադրբեյչան		անազատ	5.5	5	6
Վրաստան		մասամբ ազատ	3.5	3	4
Հայաստան	2010	մասամբ ազատ	5.0	4	6
Ադրբեյչան		անազատ	5.5	5	6
Վրաստան		մասամբ ազատ	4.0	4	4
Հայաստան	2009	մասամբ ազատ	5.0	4	6
Ադրբեյչան		անազատ	5.5	5	6
Վրաստան		մասամբ ազատ	4.0	4	4
Հայաստան	2008	մասամբ ազատ	4.5	4	5
Ադրբեյչան		անազատ	5.5	5	6
Վրաստան		մասամբ ազատ	4.0	4	4
Հայաստան	2007	մասամբ ազատ	4.5	4	5
Ադրբեյչան		անազատ	5.5	5	6
Վրաստան		մասամբ ազատ	3.0	3	3
Հայաստան	2006	մասամբ ազատ	4.5	4	5
Ադրբեյչան		անազատ	5.5	5	6
Վրաստան		մասամբ ազատ	3.0	3	3
Հայաստան	2005	մասամբ ազատ	4.5	4	5
Ադրբեյչան		անազատ	5.5	5	6
Վրաստան		մասամբ ազատ	3.5	4	3
Հայաստան	2004	մասամբ ազատ	4.0	4	4
Ադրբեյչան		անազատ	5.5	5	6
Վրաստան		մասամբ ազատ	4.0	4	4
Հայաստան	2003	մասամբ ազատ	4.0	4	4
Ադրբեյչան		անազատ	5.5	5	6
Վրաստան		մասամբ ազատ	4.0	4	4
Հայաստան	2002	մասամբ ազատ	4.0	4	4
Ադրբեյչան		անազատ	5.5	5	6
Վրաստան		մասամբ ազատ	4.0	4	4
Հայաստան	2001	մասամբ ազատ	4.0	4	4
Ադրբեյչան		անազատ	5.5	5	6
Վրաստան		մասամբ ազատ	4.0	4	4
Հայաստան	1999	մասամբ ազատ	4.0	4	4
Ադրբեյչան		անազատ	5.0	4	6
Վրաստան		մասամբ ազատ	4.0	4	4
Հայաստան	1998	մասամբ ազատ	4.0	4	4
Ադրբեյչան		անազատ	5.5	5	6
Վրաստան		մասամբ ազատ	3.5	4	3

ՁԼՄ-ի սոցիալականացման հետևանքով ժուռնալիստիկան **քաղաքացիական հաղորդակցության** անհրաժեշտ պայմանն է, առանց որի ամինար է պատկերացնել ժամանակակից հասարակական և միջանձնային հարաբերությունները։ Ընդ որում, սոցիալական մեղիայի զարգացման օրինաչափություններն ու միտումները ցույց են տալիս, որ արդի սոցիալական մեղիան, մեղիագործնթացները և սոցիալական հաղորդակցման

<sup>13</sup>Տե՛ս <http://www.freedomhouse.org>

մատրիցան բնորոշ են ոչ միայն ժողովրդավարական, այլև ոչ ժողովրդավարական հասարակություններին: Անկախ քաղաքական վարչածներից՝ դրանք դառնում են քաղաքացիավարության ինքնատիպ ընթացակարգեր՝ կատարելագործելով քաղաքացիական մասնակցության և հանրային որոշումների ընդունման տեխնոլոգիաները, որոնք աստիճանաբար կայացնում են քաղաքացիական վերահսկողության և ներկայացուցչության ինստիտուտները: Քաղաքացիական ժուռնալիստիկան տեղեկատվական-հաղորդակցական նոր տեխնոլոգիաների միջոցով անցում է կատարում ազգային և վերագգային քաղաքացիական ինքնությանը, մշակույթին, կրոնին, արժեքներին, գաղափարախոսությանը և կրթությանը:

Մեղիակորությունը, մեղիասությեկտը, մեղիավարքագիծը, մեղիամշակույթը, մեղիակոմպետենտությունը, մեղիակտիվությունը փոխգործակցող սոցիալ-քաղաքական գործոնների համակարգային ամբողջություն են, որը հնարավոր է դարձնում բազմակողմանի և բազմամակարդակ սոցիալականացման գործընթացը: Այն առանցքային նշանակություն ունի ինչպես քաղաքացիական, այնպես էլ արհեստավարժ լրագրողական գործունեության համար՝ մեղիասությեկտներից պահանջելով լինել մարդակենտրոն և սոցիոկենտրոն: Քաղաքացիավարական մեղիակրատիան ապահովում է մեղիահամայնքի և հասարակության արդյունավետ գործառությունն ու փոխլրացուցչությունը: Քաղաքացիական հանդուրժողականությունը, բազմամշակութայնությունը, սոցիալական երկխոսությունն ու շարժունակությունը, փոխհամաձայնությունն ու փոխգիշումը, ժողովրդավարական լեգիտիմությունն արդյունավետորեն գործում են, եթե առկա են սոցիոկրատական բազմաբնույթ խմբեր, միավորումներ, շարժումներ և կազմակերպություններ, որոնց անհատական և հանրային շահերով, պահանջմունքներով, դրդապատճառներով ու դիրքորոշումներով էլ հենց իրականացվում է մեղիագործընթացների սոցիալական կապիտալի չափումը:

Արդի մեղիահեղափոխությունը քաղաքացիական-ժողովրդավարական հեղափոխություն է, որը քաղաքացիակենտրոն է դարձնում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները: Յանացանցում ներգրավված օգտատերերը ակտիվ քաղաքացիական մասնակցության շնորհիկ դառնում են սոցիալական գործոն՝ ազդելով ցանցային հաղորդակցման տարածամանակային միջակայքի վրա: Այս համատեքստում ներցանցային, վերցանցային և առցանցային մասնակցությունները ծեռք են բերում սոցիալական չափում: Չնայած այն հանգամանքին, որ համացանցը մեկ միասնական տեղեկատվական-հաղորդակցական համակարգում համախմբում է մեղիա դաշտը, սակայն քաղաքացիական ժուռնալիստիկայի սոցիալականացման կառուցվածքային-գործառական երաշխիքը համարժեք կիրարմասնակցությունն է: Դա էլ իր հերթին առաջադրում է նոր հաղորդակցածին, տեղեկատվածին և քաղաքակրթածին մարտահրավերներ: Ակնհայտ է, որ տեղեկատվության գերհոստանակությունը, գերհագեցվածությունն ու գերհաղորդունակությունն իրականում վկայում են սոցիալական ցանցերի անսահման հնարավորությունների և քաղաքացիավարական շարժունակության մասին:

Այսպիսով, քաղաքացիական ժուռնալիստիկան նպաստում է համար-

ԺԵՐ սոցիալ-քաղաքական հաղորդակցության, քաղաքացիական գործընկերության և վստահության կառուցակցմանը, ապահովում է արդյունավետ քաղաքացիավարական վերահսկողության, քաղաքացիակենտրոն շահերի և հիմնարար սոցիալական պահանջնունքների իրականացում, հանրային քաղաքականության մշակման և հանրային որոշումների ընդունման գործընթացի վրա քաղաքացիավարական ազդեցություն: Տեխնոլոգիական քաղաքակրթությունը, ցանցային իշխանությունը (*netocracy*)<sup>14</sup>, ցանցային «բուրգերը» և սոցիալական մեղիայի տեղեկատվական գերիշխանությունն աստիճանաբար հանգեցնում են հանրային որոշումների ընդունման գործընթացում քաղաքականության սուբյեկտների քաղաքացիավարական պատասխանատվության մակարդակի բարձրացմանը:

**АШОТ АЛЕКСАНЯН – Гражданская журналистика как цивилиархический фактор.** – В статье рассматривается становление гражданской журналистики и описываются характерные особенности цивилиархического участия. Информационно-коммуникативные процессы, происходящие ныне на глобальном, региональном и национальном уровнях, содействуют становлению общества знания. Гражданская журналистика – это цивилиархическое участие, которое инициируется и осуществляется отдельными лицами, группами и общественными объединениями путём демократического влияния на государственную политику, на подготовку и принятие решений, а также контроль за их исполнением. В информационно-коммуникативном пространстве участие блогеров и пользователей создает широкие возможности для многостороннего взаимодействия и социальных связей. Гражданская журналистика обеспечивает адекватную социально-политическую коммуникацию, конструирует гражданское доверие и партнёрство, эффективный цивилиархический контроль и осуществляет основные социальные потребности.

**ASHOT ALEKSANYAN – Civic Journalism as a Civilarchic Factor.** – This article scrutinizes the problem of formation of civic journalism as a civilarchic factor and describes the characteristics of civilarchic participation. In modern civilarchic systems, information and communication processes at the global, regional and national levels contribute to the establishment of the knowledge society. Civic journalism is a civilarchic participation being initiated and realized by individuals, groups and community associations through the providing of democratic influence on public policy to the citizens in the field of preparation, adoption, control and making decisions. In information-communication space bloggers' and social networks users' adequate participation creates new opportunities for multilateral cooperation and social relationships. Civic journalism provides adequate social and political communication, construction of civic trust and partnership, effective civilarchic control, implementation of basic social needs and civil rights.

---

<sup>14</sup> Այդ մասին տես *Bard A. and Soderqvist J., NETOCRACY: the new power elite and life after capitalism. FT Press, 2002, էջ 193-215, Tchurovsky D., Collaborative Democracy: The Transition from Money-Driven to Knowledge-Based Society. Create Space Independent Publishing Platform , 2011, էջ 181-210:*